

*Տեղական ինքնակառավարման հարցերով անկախ իրավական փորձագետ,  
Երևանի հյուսիսային համալսարանի իրավագիտության և  
հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս,  
նույն ամբիոնի «Դատական իրավունք» մասնագիտացման հայցորդ*

## ՆԱՍՏԱՅՆՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՆՍԱՆԱԳՐԱԿԱՆ, ՃՅՈՒՂԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Համայնքների իրավունքները, ինչպես նաև երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Մարդու իրավունքները մարդկային քաղաքակրթության բարձրագույն արժեքներից մեկն են, որոնք ներառում են անհատական և սոցիալական առումով ամենատարբեր տեսանկյուններ: Մարդու իրավունքները հստակորեն ձևավորվում են անհատականության առանձնահատկություններով և բնութագրերով, որոնք արտահայտում են ազատությունը, անբաժանելի են և անհրաժեշտ<sup>1</sup>:

Մեր կարծիքով՝ տեղական ինքնակառավարման իրավունքը պարզապես մեխանիկորեն ձևավորված տարածքներում բնակվող յուրաքանչյուր անձի (քաղաքացու) իրավունքների մեխանիկական ավելացում չէ: Տեղական ինքնակառավարումը բնակիչների հանրությունն է, համայնքները (տարածքային կոլեկտիվները)՝ իրենց բնորոշ հատկանիշներով: Տարածքային կոլեկտիվների և համայնքների էական հատկանիշների վերաբերյալ սոցիալական ուղղությամբ գիտնականները բազմաթիվ տեսություններ են մշակել և սահմանել են դրա տարբեր առանձնահատկություններ:

Ռուս տեսաբան Մելեքինը սահմանում է համայնքների ավելի քան տասն առանձնահատկությունները<sup>2</sup>: Դրանք են՝

- սոցիալական միասնությունը,
- ինքնակարգավորումը,
- օրենքով իրեն վերապահված լիազորությունները և գործառույթները

- անմիջականորեն իրականացնելը,
- համայնքի խնդիրների առաջնահերթ լուծումը,
- ինքնաբավությունը և ֆինանսական գործերի վարումը,
- իրավունքների և շահերի պաշտպանությունը,
- վարչատարածքային միավոր լինելը,
- ներքին կազմակերպական հարաբերությունների առկայությունը,
- պետության և քաղաքացիական հասարակության հետ հարաբերությունները,
- ինստիտուցիոնալացված ներքին հարաբերություններ,
- բնակիչների իրավունքները կրելն ու իրացնելը<sup>3</sup>:

Նշված բոլոր առանձնահատկությունները թերևս սպառիչ չեն: Մենք ևս կիսում ենք համայնքի առանձնահատկությունների մասով ռուս տեսաբանի կողմից սահմանված հատկանիշները, և գտնում ենք, որ համայնքային շահերը բնակիչների ընդհանուր շահերն են, որոնք համայնքի (ինքնակառավարման) հիմնական կապող գործոններից մեկն են: Հետևաբար, համայնքների իրավունքների հետ կապված խնդիրները կարող են դառնալ պետության և իրավունքի տեսության տեսանկյունից անկախ հետազոտության քեմա:

Մեր կողմից ուսումնասիրվել է նաև համայնքների իրավունքների և տեղական ինքնակառավարման իրավական երաշ-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



խիբների միջազգային փորձը: Առաջադեմ աշխարհի բազմաթիվ պետություններ համայնքների իրավունքների իրացման և համայնքների կայացման, ինչպես նաև նրանց մարմինների ձևավորման ու գործունեության, համայնքի իրավունքների երաշխավորման և պաշտպանության մասով երկար տարիների և նույնիսկ դարերի փորձ են կուտակել: Այն հայտնի է արդի աղբյուրներից և վկայում է այն մասին, թե ինչ ազդեցություն է ունենում, օրինակ, ազատ համայնքի տեսությունը 19-րդ դարի առաջին կեսին եվրոպական երկրների սահմանադրական զարգացման տեսության վրա և պրակտիկայում, որն արտացոլվում է 1831 թ. Բելգիայի Սահմանադրության դրույթներում հատուկ «կոմունա» իշխանության առկայությամբ, ինչպես նաև 1849 թ. Ֆրանկֆուրտի Ազգային ժողովի կողմից մշակված Սահմանադրությամբ, որը հողվածներ էր պարունակում համայնքների հատուկ հիմնարար իրավունքների մասին<sup>4</sup>:

Միանգամայն խրախուսելի է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թ.-ին փոփոխություններով տեքստում մեկ ամբողջական գրուխ է նվիրված տեղական ինքնակառավարման համակարգին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարման իրավունքի իրացումը համայնքներում, ինչպես նաև սահմանադրական երաշխիքներ է սահմանել համայնքի կառավարման մարմինների ձևավորման հարցում: ՀՀ Սահմանադրությունը հիմնարար է համարում համայնքի սեփականության նորմը, ուստի 184-րդ հոդվածի համաձայն՝ համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: ՀՀ Սահմանադրության փոփոխությունները հատուկ ուշադրություն են նվիրում այնպիսի կարևորագույն դրույթների, ինչպիսիք են համայնքի բյուջեն, տեղական հարկերը, տուրքերն ու վճարները: Հատկանշական ենք համարում մեջբերել ՀՀ Սահմանադրության

185-րդ հոդվածի դրույթները, համաձայն որոնց, համայնքի ավագանին օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակում սահմանում է տեղական հարկեր և տուրքեր, միաժամանակ կարող է նաև համայնքի մատուցած ծառայությունների համար սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող տեղական վճարներ: Համայնքների գործունեության իրականացման մասով կարևոր են համայնքների ֆինանսավորման, նրանց ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության, հանրային շահերից ելնելով միջհամայնքային համագործակցության իրականացման հետ կապված սահմանադրական կարգավորումները, որոնք հիմնարար երաշխիքներ են ներպետական օրենսդրությամբ համայնքների հիմնական կենսագործունե սպահովելու նպատակով սահմանված իրավակարգավորումների համար: Կարծում ենք, որ նշված սահմանադրական նորմերի և դրույթների ներդրումը, դրանց համալիր կիրառումը ժամանակակից գործունեության արագացման, ինտեգրացիոն և տեղեկատվական տեխնոլոգիաների պայմաններում իրենց նպաստը կրերեն համայնքային հիմնախնդիրների առավել արագ և արդյունավետ լուծմանը, համայնքների կայացմանը, միջհամայնքային համագործակցության հեռանկարային ծրագրերի մշակմանը և իրականացմանը, տարածքային համաչափ զարգացմանը, քաղաքացիական հասարակության հիմքերի կառուցմանն ու ամրապնդմանը:

Համայնքների իրավունքների իրավական երաշխիքներից կարևորագույնը թերևս համարվում են դրանց սահմանադրական երաշխիքները: Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով՝ համայնքների մասով սահմանվել են բազմաթիվ իրավունքներ և պարտականություններ ենթադրող կարգավորումներ: Մինչ Սահմանադրության 9-րդ գլխին

անդրադառնալը, որը սահմանում է տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման հետ կապված հիմնական հարաբերությունները, հարկ ենք համարում մեկնաբանել սահմանադրական այն նորմերը, որոնք տեղ են գտել ՀՀ Սահմանադրության՝ այլ ոլորտներ կարգավորող մյուս գլուխներում:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանվում է օրինականության սկզբունքը: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի՝ պետական և ՏԻՄ-երն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Մեջբերված սահմանադրական նորմն իր տրամաբանական շարունակությունն է ապահովել ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածում, մասնավորապես՝ նշված հոդվածի 5-րդ մասը սահմանել է հետևյալը. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով»: Վերը մեջբերված սահմանադրական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքները և նրանց ՏԻՄ-երը կարող են իրենց վերապահված լիազորություններն իրականացնել միայն Սահմանադրությամբ և օրենքներով:

Չնայած վերը նշվածին՝ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրավակիրառ և իրավախրացող պրակտիկայում մինչև հիմա շարունակում են խախտվել սահմանադրական նորմերը, քանի որ համայնքների համար մեծ թվով լիազորություններ են սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, մասնավորապես՝ կառավարության որոշումներով: Այդ որոշումները բազմաթիվ են և բազմազան, և դրանք ընդունելիս գործադիրը որևէ օրենքի, որով համապատասխան լիազորություն է վերապահվել համայնքին, հղում չի տալիս: Կառավարության մնան որոշումներն ընդունվել են ֆինանսների, քաղաքաշինության, բնապահպանության, առողջապահության, գյուղատնտե-

սության և այլ բնագավառներում:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ մենք առաջարկում ենք տեղական ինքնակառավարման բնագավառի քաղաքականությունը մշակող մարմնին՝ ուսումնասիրել և վեր հանել բոլոր տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված այն որոշումները, որոնցով համայնքների և նրանց ՏԻՄ-երի համար սահմանվել են լիազորություններ: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ և 182-րդ հոդվածի դրույթները, առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել կառավարության որոշումներով համայնքների և նրանց ՏԻՄ-երի համար լիազորություններ սահմանող դրույթները և առաջնորդվել բացառապես օրենքով լիազորություններ սահմանելու սկզբունքով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը: Հետևաբար՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի օտարումից կամ վարձակալությունից ստացվող եկամուտները համարվում են համայնքի սեփական միջոցները և մուտքագրվում են համայնքի բյուջե՝ որպես համայնքի սեփական եկամուտ: Առաջին հայացքից «պարզ ճշմարտություն» թվացող վերը նկարագրված գործընթացը, որը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ, շատ դեպքերում խախտվում է օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակով:

Այսպես՝ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածը կարգավորում է պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները: Նշված հոդվածի 8-րդ մասով սահմանված է. «Մինչև 2005 թվականի նոյեմբերի 26-ը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի (ներառյալ՝ սույն օրենսգրքի 118-րդ



հողվածի 4-րդ կետի հիմքով ձեռքբերված հողամասերը, բացառությամբ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի) նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռքբերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց սույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են՝ 1. տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը, 2. հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար տրամադրված հողամասերը, եթե դրանց վրա սահմանված կարգով կառուցվել են շենքեր և շինություններ, այդ թվում՝ կիսակառույց շենքեր, շինություններ՝ անկախ դրանց ավարտվածության աստիճանից:»:

Նշված նորմի առկայության պայմաններում «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 26.11.2005 թ.-ի ուժի մեջ մտած ՀՀ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված հողամասերը սեփականության իրավունքով ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման դեպքում՝ անկախ նրանից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

Հիմք ընդունելով օրենքում կիրառված «տվյալ պահին գործող կադաստրային

արժեք» հասկացությունը՝ կարծում ենք, որ սուբյեկտի կողմից հողամասի կադաստրային արժեքի վճարումը պետք է կատարվի տվյալ պահին գործող կադաստրային արժեքին համապատասխան, հետևաբար այն պետք է վճարվի տվյալ պահին հողամասի սեփականատեր համարվող համայնքի բյուջեի հաշվին, հակառակ դեպքում անտրամաբանական է դառնում նշված իրավանորմի կիրառումը:

Հաշվի առնելով վերոնշյալ պատճառները՝ իրավաիրացնող այս խնդիրն իրարից միանգամայն տարբերվող մեկնաբանությունների առիթ է դարձել ինչպես գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող լիազոր մարմնի, այնպես էլ համայնքների ՏԻՄ-երի շրջանակում:

Խնդիրը պարզապես այն է, որ 2003-2006 թթ., հիմնականում՝ 2005-2006 թթ.-ի ՀՀ կառավարության տասնյակ որոշումներով ՀՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը համատարած կարգով անհատույց սեփականության իրավունքով հանձնվել են ՀՀ համայնքներին: Պետական սեփականություն հանդիսացող հողերը ՀՀ համայնքներին փոխանցվելուց հետո համայնքների կողմից կատարվել են պետության կողմից իրենց հանձնված գույքերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներ, որն ապահովելու համար համայնքները համապատասխան ծախսեր են կատարել համայնքային բյուջեների միջոցների հաշվին: Մինչ այդ ժամանակահատվածը պետական սեփականություն հանդիսացող բազմաթիվ շենք-շինություններ «պայմանական» օգտագործման իրավունքով ՀՀ կառավարության կողմից տրվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ հետագայում իրենց կողմից տվյալ գույքերի և դրանցով զբաղեցրած հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ապահովելու պայմանով: Սակայն,

շենք-շինությունների համապատասխան սեփականատերեր համարվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող շենք-շինությունների օտարումը կազմակերպելու և իրականացնելու դեպքում նշված սուբյեկտները պետք է վճարեն տվյալ շենք-շինությամբ զբաղեցրած հողամասի կադաստրային արժեքը: Վիճելի շենք-շինություններով զբաղեցրած հողամասերը՝ 2006 թվականից սկսած համարվում են համայնքային սեփականության հողեր, դրանց մասով համայնքներն իրենց բյուջեների սեփական միջոցների հաշվի կատարել են չափագրման, համայնքային հաշվեկշռում ներառելու և դրանց նկատմամբ իրավունքների պետական գրանցման ապահովման աշխատանքները, հետևաբար տրամաբանական է, որ օտարվող հողերի, ընդ որում՝ գործող հողային օրենսգրքի կարգավորման պայմաններում, տվյալ պահի կադաստրային արժեքները վճարվեն համայնքային բյուջեներ: Մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 26.11.2005 թ.-ի ուժի մեջ մտած ՀՀ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասն այլ կերպ է մեկնաբանվել, համաձայն որի, հիմնավորվել է նշված հողամասերի օտարման մասով կադաստրային արժեքները պետական բյուջե մուտքագրելու հանգամանքը: Գտնում ենք, որ այս իրավաիրացնող խնդրի ճիշտ հանգուցալուծումը կարևոր նշանակություն ունի համայնքների բնականոն կենսագործման համար, քանի որ հողամասերի օտարումից առաջացած կադաստրային արժեքների վճարումները համարվում են համայնքների սեփական եկամուտների հիմնական աղբյուրներից մեկը, որոնց բացակայության պայմաններում բազմաթիվ համայնքային խնդիրներ և ծրագրեր կմնան չլուծված:

Միաժամանակ հարկ ենք համարում

անդրադառնալ այն փաստին, որ Երևան քաղաքի մասով սահմանվել է բացառություն, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 06.03.2018 թ.-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1517-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 251-Ն որոշման 2.1-րդ կետով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 12-րդ, 18-րդ և 19-րդ մասերով նախատեսված՝ Երևանի համայնքի վարչական սահմաններում գտնվող բոլոր հողամասերի կադաստրային արժեքն ամբողջությամբ ենթակա է վճարման Երևանի համայնքի բյուջե՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերով այլ համամասությունների:

Գտնում ենք, որ կառավարության վերը նշված որոշումը անհավասար պայմաններ է ստեղծել Երևանի և ՀՀ մյուս համայնքների մասով, քանի որ հարց է առաջանում, եթե հողային օրենսգրքի նույն կարգավորումների պայմաններում Երևան համայնքին փոխանցված գույքի մասով վերը նշված որոշմամբ տրվել է հողամասերի կադաստրային արժեքները համայնքի բյուջե վճարելու հնարավորություն, ապա այդ դեպքում ինչու մյուս համայնքները, որոնց ևս պետական սեփականություն հանդիսացող հողերը տրվել են կառավարության համապատասխան մանատիպ որոշումներով, չպետք է օգտվեն այդ իրավական հնարավորությունից: Կարծում ենք, որ այն մաս չի բխում ՀՀ կառավարության կողմից որդեգրած տարածքային համաչափ զարգացման քաղաքականության սկզբունքներից:

Այս իրավաիրացնող խնդիրը հանդիպում է մաս դատական պաշտպանության շրջանակում, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ քաղաքացիական վեճերի դեպքում համայնքը դիմում է դատարան, պարտավորեցնելով հողամաս ձեռքբերող ֆիզիկական կամ իրավա-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



բանական անձին հողամասի օտարման կադաստրային արժեքները համայնքի բյուջե վճարել: Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ որոշ դեպքերում դատարանը ՀՀ հողային օրենսգրքի վերը մեջբերված վիճելի դրույթը մեկնաբանել է ի օգուտ համայնքի, իսկ կան դեպքեր երբ դատարանի մեկնաբանությունները և ըստ այդմ էլ գնահատականները եղել են ճիշտ հակառակը: Համայնքների իրավունքների դատական պաշտպանության տեսանկյունից հատկապես կարևոր է նման կարևոր հարաբերությունների մատուցում օրենսդրական կարգավորումների հատկությունն ու բացառիկությունը: Այն հնարավորություն կտա համայնքներին՝ վստահորեն իրացնելու իրենց վերապահված իրավունքները, միաժամանակ բավարար պայմաններ կստեղծի արդարադատություն իրականացնող մարմինների համար՝ իրավական պատշաճ գնահատականներ տալ և քաղաքացիական գործերի քննության արդյունքում օբյեկտիվ որոշումներ ընդունել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է փոփոխություններ կատարել ՀՀ հողային օրենսգրքում, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005 թ.-ի ընդունված և 26.11.2005 թ.-ին ուժի մեջ մտած ՀՀ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, հստակ ամրագրելով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքի կադաստրային արժեքները համայնքային բյուջե վճարելու վերաբերյալ կարգորոշումները: Բացի դրանից՝ առաջարկվում է փոփոխություններ կատարել նաև ՀՀ կառավարության 06.03.2018 թ.-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1517-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 251-Ն որոշման մեջ, Երևան քաղաքի օրինակով, նույն հնարավորությունը և երաշխիքը սահմանելով մյուս համայնքների մատուցելու:

Համայնքների իրավունքների պաշտպանության երաշխիքներից են ֆինանսական և տնտեսական երաշխիքները<sup>5</sup>: Համայնքը, հանդես գալով որպես իրավաբանական անձ, ինքնուրույն է իր ֆինանսական և տնտեսական գործունեության շրջանակում: Սակայն, ֆինանսական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը երբեմն ոչ այնքան բավարար երաշխիքներ է սահմանել նրանց համար՝ ֆինանսական գործարքներ և ծրագրեր իրականացնելու դեպքերում:

Այսպես՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրով (ֆակտորինգով) մի կողմը մյուս կողմին (հաճախորդին) հանձնում կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ՝ ի հաշիվ հաճախորդի (վարկատուի)՝ երրորդ անձից (պարտապանից) ունեցած դրամական պահանջի, որը բխում է հաճախորդի կողմից՝ երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալին զիջում է կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը<sup>6</sup>: Իրավակիրառ պրակտիկայում մի շարք համայնքներ ֆակտորինգի պայմանագրեր են կնքել գործակալների և բանկերի հետ:

Օրինակ, «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» գործունեությանը պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության մի շարք համայնքներում իրականացվում է էներգախնայողության ծրագրեր: Այդ ծրագրերը հնարավորություն են ստեղծում շահագործելու համայնքային նշանակության ենթակառուցվածքները քիչ ծախսատարության պայմաններում, որն էլ իր հերթին համայնքների համար ստեղծում է հավելյալ խնայվող ֆինանսական միջոցներ, համայնքի կողմից այլ հանրային ծառայությունների մատուցմանը ուղղելու նպատակով:

Համայնք-գործակալ-բանկ եռակողմ ֆակտորինգային քաղաքացիական իրա-

վահարաբերությունը կասեցվում է այն ժամանակ, երբ ֆինանսների բնագավառի պետական լիազոր մարմինն արձանագրում է, որ ֆակտորինգային պայմանագրի դիմաց համայնքի կատարվելիք վճարումը մեծ է իր ֆոնդային բյուջեի չափից: Այս սահմանափակումը՝ պայմանավորված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումներով, համաձայն որի՝ համայնքը, պետական լիազորված մարմնի համաձայնությամբ, կարող է վարկային պայմանագիր կնքել (ընդգծումը մերն է՝ հեղ.) կամ արժեթղթեր թողարկել այն պայմանով, որ յուրաքանչյուր բյուջետային տարում վարկի և արժեթղթերի մարման ծրագրով նախատեսված տարեկան գումարը՝ մայր գումարի և տոկոսավճարների հանրագումարը, չի գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան տարվա ֆոնդային մասի եկամուտների 20 տոկոսը:

Ղեկավարվելով, մեջբերված օրենսդրական նորմով, Ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի համապատասխան ստորաբաժանումը կասեցնում է համայնքի ֆինանսական փոխանցումների գործընթացը գանձապետական հաշվեհամարի միջոցով և վերջինիս իրավունքով օժտելու նպատակով դիմում է ներկայացնում տարածքային կառավարման ու զարգացման նախարարություն, տվյալ համայնքին թույլատրելու ֆակտորինգի պայմանագրերից բխող ֆինանսական պարտավորությունների իրականացման շարունակությունը ապահովելու համար: Իր հերթին, տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, որը օրենքի իմաստով լիազոր պետական կառավարման մարմինն է, ուսումնասիրում է համապատասխան համայնքի տարեկան բյուջեն, սեփական եկամուտների ծավալը, գնահատում է հնարավոր ռիսկերը, որի արդյունքում տալիս է կամ դրական, կամ բացասական եզրակացություն:

Այդ ընթացքում նախ կասեցվում է համայնքի հետ կնքված ֆակտորինգի պայմանագրից բխող գործողությունների ընթացքը, մինևույն ժամանակ, բանկը և գործակալը հաշվի չառնելով ՀՀ օրենսդրությամբ համայնքների մասով ամրագրված իրավական սահմանափակումները, այլև տվյալ համայնքին համարում են «անհուսալի» գործընկեր և շատ են դեպքերը, երբ միանգամից լուծվում են այդ պայմանագրերը: Այն դեպքերում, երբ լիազոր մարմինը տալիս է իր համաձայնությունը, կենտրոնական գանձապետարանը թույլատրում է համայնքին կատարելու ֆակտորինգի պայմանագրից բխող փոխանցումները: Գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորող դրույթները, սահմանափակում են համայնքների՝ ֆինանսական և ազատ տնտեսական գործունեության իրականացման իրավունքները: Հարկ ենք համարում նման դեպքերում անդրադառնալ նաև, այն հանգամանքին, թե որոնք են լինելու պետության երաշխիքները համայնքների մասով, երբ, օրինակ նույն ֆակտորինգի պայմանագրի հիմքով առաջանում է դատական վեճ և այդ հարցը հանձնվում է դատարանի քննությանը: Հարց է առաջանում, եթե պետությունն իր վարչական միջամտությամբ թույլտվություն է տրամադրում համայնքին՝ մտնելու նման գործարքի մեջ, ապա դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրից բխող դատավարական պարտավորությունների կրման ժամանակ ունակ է վերցնելու «իր բաժին բեռը»: Մեր կողմից կատարված իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ պետությունը՝ ի դեմս լիազոր մարմնի, չի կրում նման պարտավորություններ վեճերի առաջացման դեպքերում: Փաստորեն, ստացվում է մի վիճակ, երբ օրենսդրական նման կարգավորումների պարագայում, մի կողմից սահմանափակվում է համայնքի ֆինան-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն





սական ազատ գործունեության իրավունքը, իսկ մյուս կողմից այդ սահմանափակման արդյունքում համայնքն ինքնուրույն է կրում ֆինանսական գործարքից առաջացող բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ դատավարական գործընթացի ծախսերը:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածում, մասնավորապես սահմանելով, որ համայնքը կարող է վարկային պայմանագիր կնքել կամ արժեթղթեր թողարկել առանց պայմանների: Դա հնարավորություն կընձեռնի համայնքներին՝ իրացնելու ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված դրամական պահանջի գիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիր կնքելու իրավունքը, ինչպես նաև հավասար պայմաններ կառաջադրի համայնքների համար, որպես իրավաբանական անձ, քաղաքացիական գործարքներ և պայմանագրեր կնքելու հարցերում, հետևաբար՝ նաև քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ձեռքբերելու իմաստով:

Համայնքների իրավունքների ճյուղային նորմատիվ իրավական երաշխիքների տեսանկյունից կարևոր են հողային իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումները: Համայնքն ունի հողի նկատմամբ սեփականության իրավունք և համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է (ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվ.): Համայնքի սեփականության ներքո գտնվող հողերը կառավարում և տնօրինում են համայնքի ղեկավարն ու ավագանին՝ քաղաքացիական օրենսգրքով, հողային օրենսգրքով, այլ օրենքներով ու

նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով (ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մաս): Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքից մեջբերված իրավակարգավորող դրույքը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի կարգավորումների տրամաբանությանը համապատասխան, լիազորություններ է սահմանել համայնքի համար՝ հողերի կառավարման և տնօրինման մասով: Նշված նորմի վերլուծությունը, թույլ է տալիս արձանագրելու, որ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի տնօրինման հետ կապված ցանկացած գործարք իրականացվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և համայնքի ավագանու հաստատմամբ: Դա է վկայում նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի իրավակարգավորումը, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը: Նույն օրենքի կարգավորումների շրջանակում համայնքի ավագանին վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ<sup>7</sup>, այդ թվում նաև համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարման գործընթացների նկատմամբ: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումները, գտնում ենք, որ միանգամայն տրամաբանական են և բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջներից, քանի որ վերը նշված իրավական ակտերով սահմանվում են համայնքի գույքի սեփականության իրավունքը և համայնքի ավագանու կողմից սեփականությունը տնօրինելու և այդ սեփականության տնօրինման գործընթացները վե-



րահսկելու լիազորությունները:

Սակայն, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված են մի շարք կառուցակարգեր, որոնք հակասում են համայնքի գույքային իրավունքների սահմանադրական երաշխիքներին, ինչպես նաև մի շարք ճյուղային նորմատիվ երաշխիքներին: Այսպես՝ սահմանված է, որ մարզպետը վերահսկողություն է իրականացնում հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ, ինչպես նաև պետական և համայնքային սեփականության հողամասերի տրամադրման, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման, հողերի պահպանության միջոցառումների նկատմամբ (հող. օր. 42-րդ հոդվ. 1-ին մաս): Մարզպետը, մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրագործողն է (ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդվ. 1-ին մաս), հետևաբար՝ այն համարվում է տարածքային կառավարման մարմին, որը, վերջին հաշվով, պետական կառավարման համակարգի մի մասն է: Մտացվում է, որ պետության քաղաքականությունն իրականացնող մարմինը՝ մարզպետը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի կարգավորումների շրջանակում իրավասություն ունի վերահսկելու ոչ միայն համայնքի գույքի՝ հողերի տնօրինման գործընթացը, այլև դրանք հետ վերցնելու, դրանց մասով վարձավճարների և հարկերի գանձման գործընթացները: Գտնում ենք, որ նշված օրենսդրական նորմը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, քաղաքացիական օրենսդրությամբ իրավաբանական անձանց համար սահմանված գույքային երաշխիքներին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սկզբունքներին: Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը տնօրինելու բա-

ցառիկ իրավասությունը վերապահված է համայնքը ներկայացնող տեղական օրենսդիր իշխանությանը՝ ավագանուն, և ավագանին այդ լիազորությունն իրացնում է համայնքի ղեկավարի և համայնքի աշխատակազմի միջոցով, հետևաբար՝ իրավասու է վերահսկողություն իրականացնել համայնքի տարածքում իրականացվող և համայնքի սեփականություն հանդիսացող հողերի տնօրինման ցանկացած գործընթացի նկատմամբ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված վիճելի կարգավորումները չեն բխում համայնքի՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի, կարգավիճակի տրամաբանությունից, դրանք շարունակում են համայնքը դիտարկել որպես պետության «կցորդ» և համարում են ոչ ֆորմալ կազմակերպության կարգավիճակ ունեցող սուբյեկտ: Պրակտիկայում հնարավոր չէ պատկերացնել մի դեպք, երբ, օրինակ, որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր սեփականությունը հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի օտարման գործընթացում որևէ մարմին կամ կազմակերպություն իրավասություն ունենա միջամտելու: Մինչդեռ, թե՛ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, թե՛ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և թե՛ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը հստակ սահմանել են համայնքի սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման հետ կապված կառուցակարգերը: Նշված օրենսդրական ակտերի կարգավորումների էությունը կայանում է նրանում, որ համայնքը, որպես իրավաբանական անձ, ազատ է իր գույքային իրավունքները իրացնելիս, բացի այդ համապատասխանաբար նշված օրենսդրական ակտերով սահմանվել է այն մարմինը, որն ունի բացառիկ իրավասություն վերահսկելու և տնօրինելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, այդ թվում նաև՝ հողերը: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրա-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



պետության հողային օրենսգրքում առկա են երկու տարբեր իրավակարգավորումների հակասություններ: Մասնավորապես նշված օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասը, համայնքը դիտարկելով որպես հողային իրավահարաբերությունների սուբյեկտ, սահմանել է, որ համայնքի սեփականության ներքո գտնվող հողերը կառավարում և տնօրինում են համայնքի ղեկավարն ու ավագանին: Այս նորմի իրավակիրառ իրացումը նախատեսված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որով համայնքի ավագանին վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ: Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով մարզպետի մասով սահմանված վերահսկողության լիազորությունը չի բխում վերը մեջբերված նորմի իրավակարգավորող տրամաբանությունից: Մի կողմից Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքը համայնքը ճանաչում է որպես հողային իրավահարաբերությունների «ազատ» սուբյեկտ մնացյալ իրավաբանական անձանց հետ հավասար իրավունքներ ունենալու հատկությամբ, մյուս կողմից ճիշտ հակառակ տրամաբանությամբ համայնքը ճանաչում է որպես պետության գործադիր իշխանության կամ տարածքային կառավարման մարմնին ենթակա կամ ստորադաս սուբյեկտ, որը չունի ինքնուրույն սուբյեկտի կարգավիճակ: Մարզպետին մնան իրավասությամբ օժտելը, գտնում ենք ոչ իրավաչափ, քանի որ Հայաստանի Հանրապետությունում 2005-2007թթ. ընթացքում իրականացված հողային բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության բոլոր պետական և պահուստային հողերն անհատույց Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հետևաբար՝ այդ բոլոր հողերը համարվում են համայնքների սեփականությունը հա-

նդիսացող հողեր: Եթե նախկինում, մինչև վերը նշված հողային ռեֆորմի տարիները, մարզպետին օրենքով մնան լիազորությունը վերապահելը իրավաչափ էր և նպատակահարմար, ապա այժմ դա ոչ միայն ավերորոշյուն է, այլև ընդհանուր համատեքստում՝ հակասահմանադրական նորմ է:

Ավելին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները և պատասխանատու է համայնքի ավագանու առջև (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվ. 4-րդ մաս): Սահմանադրական նշված նորմի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ համայնքի ավագանու որոշումների ուղղակի կատարողը համայնքի ղեկավարն է՝ համայնքի աշխատակազմի միջոցով: Հետևաբար, այդ որոշումների կատարման լիիրավ վերահսկողը համայնքի ավագանին է: Տվյալ պարագայում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարվում է համայնքի ավագանու որոշմամբ, հետևաբար՝ միայն համայնքի ավագանին կարող է վերահսկողություն իրականացնել համայնքի սեփականություն հանդիսացող հողերի տնօրինման գործընթացների նկատմամբ, քանի որ այդ գործընթացը իրականացվում է վերջինիս կողմից ընդունված որոշումների միջոցով:

Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված իրավակարգավորումները սահմանափակում են համայնքների, որպես հանրային իրավունքի իրավաբանական անձանց, գույքային իրավունքները և լրացուցիչ խթան են հանդիսանում համայնքների ինքնուրույնության ապահովմանը խոչընդոտելու հարցերում:

Համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի տնօրինումն այն գործընթացների ամբողջությունն է, որը ենթադրում է քաղաքացիական իրավահարաբերություններ և հետևաբար՝ կարող է առա-



ջացնել քաղաքացիաիրավական համապատասխան դատական վեճեր: Այդ համատեքստում անհնար է պատկերացնել այն իրավիճակները, երբ համայնքի և որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջև կնքվել է հողամասի օտարման որևէ գործարք, որի արդյունքում առաջացել է վեճ և այն ներկայացվել է դատարան՝ համապատասխան լուծում ստանալու նպատակով: Հարց է առաջանում. քաղաքացիական դատավարության իրավունքի իրացման պայմաններում ո՞րն է լինելու մարզպետի դերը դատարանում քննվող քաղաքացիական գործի շրջանակում, երբ, օրինակ, համայնքը դիմել է դատարանին հողամասը հետ վերցնելու կամ հողամասի վարձակալության վարձավճարները գանձելու պահանջներով: Այս հարցի պատասխանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությունը չի տալիս, քանի որ այն հստակ է. համայնքը, լինելով առանձին քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կրող սուբյեկտ, ինքնուրույն է հանդես գալիս դատարանում քննվող գույքային վեճերի շրջանակում: Այս հանգամանքը փաստվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, համաձայն որի՝ համայնքները քաղաքացիական դատավարության հարցերը կարգավորող հարաբերություններում հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով<sup>8</sup>: Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ քաղաքացիական այն վեճերը, որոնք առաջանում են համայնքների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև հողային հարաբերությունների շրջանակում, դատական քննության ժամանակ հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև երրորդ անձանց դատավարական կարգավիճակներում հանդես են գալիս միայն համայնքները և համապա-

տասխան ֆիզիկական ու իրավաբանական անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական գործի քննության շրջանակում վեճի առարկա է նաև տվյալ հողի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերը: Այդ դեպքերում որպես դատավարության մասնակից ներգրավվում են նաև գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող լիազոր մարմինը կամ դրա համապատասխան ստորաբաժանումը (ներկայացուցիչները):

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում, մասնավորապես՝ օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասում ուժը կորցրած ճանաչել 1-ին և 3-րդ կետերը, ինչպես նաև լրացում կատարել նույն օրենսգրքի 43-րդ հոդվածում, հոդվածի վերնագիրը խմբագրել «Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը հողերի օտարման, օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում»: Միաժամանակ նշված հոդվածում լիազորություններ սահմանել համայնքի ավագանու մասով առ այն, որ ավագանին վերահսկողություն է իրականացնում հողային հարաբերությունների բնագավառում համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ: Վերը նշված առաջարկության ընդունման պարագայում հնարավորություն կընձեռվի վերացնել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների հակասությունները, ինչպես նաև կհամապատասխանեցվեն հողային օրենսդրության կառուցակարգերը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քաղաքացիադատավարական օրենսդրության պահանջներին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 9 - 10 (231-232)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



## Մահմանադրական իրավունք

- <sup>1</sup> Տե՛ս Ելեյնիկով Օ.Յ., Разграничение полномочий в структуре органов местного самоуправления Российской Федерации. Автореф. дис.... канд. юрид. наук, Волгоград, 2005, էջ 30:
- <sup>2</sup> Տե՛ս Права человека: Учебник для вузов / Отв. ред. чл-корр. РАН, д.ю.н. Е.А. Лукашева, М., Издательство НОРМА, 2003, էջ 1:
- <sup>3</sup> Տե՛ս Мелёхина И.И., Местное сообщество: вопросы теории, Краснодар: ООО «Просвещение - Юг», 2003, էջ 27-40:
- <sup>4</sup> Տե՛ս Кутафин О.Е., Фадеев В.И., Муниципальное право Российской Федерации, 1997, էջ 44:
- <sup>5</sup> Տե՛ս Решетин В.М., Обеспечение и защита прав человека в области миграции: государственно-правовой аспект, Автореф. дис.... канд. юрид. наук, Волгоград, 2005, էջ 15:
- <sup>6</sup> Տե՛ս չ՛հ քաղաքացիական օրենսգրքի, 892-րդ հոդվածի 1-ին մասը: Ընդունված 05.05.1998 թ.( չ՛հՊՏ 1998.08.10/17(50):
- <sup>7</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» չ՛հ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, ընդունվել է 07.05.2002թ., (չ՛հՊՏ 2002.06.21/21(196):
- <sup>8</sup> չ՛հ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս, ընդունված է 09.02.2018թ. (չ՛հՊՏ 2018.03.05/16(1374):

## RESUME - РЕЗЮМЕ

### CONSTITUTIONAL, SECTORIAL AND OTHER NORMATIVE LEGAL GUARANTEES OF THE COMMUNITY RIGHTS

**Vahagn Petrosyan**

*Independent expert on local self-government on legal issues,*

*Lecturer of the Department of Law and Social Sciences at the Yerevan Northern University*

*The applicant of the “Judiciary Law” specialty of the Department of Law and Public  
Relations of Yerevan Northern University*

This article covers the constitutional, sectorial and other legal guarantees of community rights, the bases for sorting (grouping) them into science, the gaps in the current legislation, and proposals were made for improvement of the legislation, including the RA Constitution.

The work will be useful for practitioners, local government officials, law students and employees of the high institutions of education.

**Keywords:** *Constitution, administrative offense, procedural, norms, improvements, guarantee, legal regulation, law enforcement.*

### КОНСТИТУЦИОННЫЕ, ОТРАСЛЕВЫЕ И ДРУГИЕ НОРМАТИВНО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ПРАВ ОБЩИН

**Ваагн Петросян**

*Независимый эксперт по правовым вопросам местного самоуправления,*

*Преподаватель кафедры юриспруденции и обществознания в*

*Ереванском Северном университете*

*Соискатель кафедры юриспруденции и обществознания в Ереванском*

*Северном университете по специализации «Судебное право»*

В данной статье изучаются конституционные, отраслевые и некоторые другие нормативно-правовые гарантии прав общин, основы их классификации в науке, пробелы в Законодательстве, а также сделаны предложения для усовершенствования законодательства и конституции. Данная работа будет полезна как юристам и сотрудникам органов местного самоуправления, так и студентам и преподавателям юридических факультетов.

**Ключевые слова:** *конституция, административное правонарушение, процессуальный, норма (нормы), усовершенствование, гарантия, правовое регулирование, правоприменительный.*

**Բանալի բառեր** - *սահմանադրություն, վարչական իրավախախտում, դատավարական, նորմ (նորմեր), կադրերի զարգացում, երաշխիք, իրավապարզավորում, իրավակիրառ:*

ՍԵՄՏԵՍԵՐԲԵՐ - ՀՈՎՏԵՍԵՐԲԵՐ 2018 9 - 10 (231-232)